

ՊՈՍՏԱԼ

ՊՈՒԼԵԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
2 քիւ մէկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

—o—

Մանուցման տոյր
20 ամսով



ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rev Pere G. Kalemkarian
te ngasee N 4 Vienne

Rédaction du journal

„Ipravounk“

„A (Bulgare)“

Ред. АН

на ВѢСТНИКЪ

„Иправункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք
չիւ տրուիր

ՀԱՄԱՅՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ

ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Բարիք գումարուած ազատական Օսմանյաններու Համաժողովին սր. դիւնքը, որչափ որ իմացանք Բարիքեան հայ և օտար թերթերէ, բաւական յուսադրիչ է մեզ համար: Համաժողովին սկիզբէն մինչև վերջը Տաճատ Մահմուտ փաշայի որդին, իշխան Սապահետին իբր նախագահ և իբր ուղղամիտ և անկեղծ հայրենասէր միշտ Հայոց իրաւունքը յարգելու և անոնց օրինաւոր բաղձանքները իրագործելու կողմը բռնած է. նշանակելի է իր սալայտարարութիւնը:

«Յանցաւորը Եւրոպան է, ալ թուրքերն է: Մենք Եւրոպայէ միլիոններ փոխ առինք, և փոխանակ մեր պարտքերը վճարելու, մենք մեզ անանկ յայտարարեցինք: Մենք խոստացանք Հայաստանի վարչութիւնը բարենորոգել, և, փոխանակ բարենորոգումները գործադրելու, Հայերը ջարդեցինք»:

Համաժողովին մէջ վերակազմեալ Հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւնները երեքական ներկայացուցիչներ ունեցած են, որոնց գլուխը գտնուած են Տ. Չոպանեան և Տ. Սիսեան: Ասոնցմէ զատ Տ. Ս. Չերազ և Տ. Կ. Բասմաշեան ներկայ եղած են ժողովին: Ինչպէս մեր նախորդ թուով հրատարակեցինք, Հայ Պատուիրակներու ներկայացուցած յայտարարութիւնը ընդունուած է Համաժողովի մեծա. մասնութեան: Բայց Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրելու մասին իսլամ պատուիրակներու միջև ծագած վիճաբանութեանց միջոցին, Հայերը «Դուք նախ ձեր մէջը համաձայնեցէք ու յետոյ մեզ հետ» ըսելով դուրս ելած էին. ուրովհետեւ Մեղլիքեքի խմբագիր Ահմետ Ռիզա ու իր մէկ քանի կուսակիցները Հայկական խնդրոյն գոյութիւնը իսկ ճանչնալ չուզելու և Պեռլինի դաշնագրին 61րդ յօդուածին տրամադրութիւնները թուրքիոյ ընդհանուր նահանգներէ

բուն վերագրելու ծակ տրամաբանութիւններ կրէին. սակայն, ինչպէս կը կարգանք Մեղլիքեքի մէջ, Տ. Չերազ արթնութիւնը ունեցած է բացարձակ թէ Պիլինի 61րդ յօդուածին տրամադրութիւնները չեն կրնար բոլոր կայսրութեան նահանգներուն վերագրուիլ, որովհետեւ անոնք տեղական նկարագիր (քառաթէն) ունին, յարմարեցուած են հարաւորակ նահանգներու տեղական պէտքերուն: Եւրոպան 61րդ յօդուածին գոյութիւն տուած է արգիւիտ համար ուսում-թրքական պատերազմի տալէն Հայաստանի մէջ Ֆիւրտերու և Չերքէզներու գործած խժգոնութիւնները: Ճշմարտութիւն քիւրտ շէյխը՝ որ սրբազան պատերազմ կը քարոզէր, Հայոց վրայ ինկած էր, փոխանակ Ռուսներու դէմ երթալու. նա կողոպտած, կործանած էր բազմաթիւ հայ գիւղեր և բնակիչները սուրէ անցուցած: միեւնոյն ատեն ուրիշ իսլամներ, ուսում բանակին առջին անգամ ետ քաշուելէն վերջ, Պայագիտի մէջ բազմաթիւ հայեր կը շարդէին: Ահա, 61րդ յօդուածը այս կոտորածներուն ծնունդն է, և մասնաւորապէս Դուռը կը հրաւիրէ երաշխաւորիլ Հայոց ապօհովութիւնը Ֆիւրտերու և Չերքէզներու դէմ: Այս ամենը կապուցուանք թէ 61րդ յօդուածը անձեռն ազնւան մը և անհրաժեշտաբար տեղական նկարագիր մը ունի: Ուրեմն մեծ սխալ մըն է զանի կայսրութեան բոլոր նահանգներուն վերագրել շանալը, ըսաւ, կը բաւէ որ Հայերուն խօստացուած բարենորոգումները ընդհանուր բարենորոգումներու փոխելու նպատակ չկենայ, Հայկական խնդիրը ջնջելու թագուն մտքով: 61րդ յօդուածը և 1895 մայիս 11ի բարենորոգմանց ծրագիրը հայաբնակ նահանգներու պէտքերուն յարմարեցուած են, զանոնք կարելի չէր, օրինակի համար, իզմիրի կամ Պուրսայի նահանգներուն մէջ գործադրել, ուր Ֆիւրտ ազգաբնակչութիւն չկայ: Ուրեմն աւելի ճիշդ պիտի ըլլար ժողովին 4րդ որոշումը երկու որոշ մասերու բաժնի և Համաժողովոյն յայտագրին մէջ իշխատակել:

1. Հայաստանի եւ Մակեդոնիոյ համար դաշնագրերնու եւ միջազգային պայմանագրութեանց տրամադրած բարենորոգումներու գործադրութիւնը:

2. Կայսերական միւս նահանգներուն մէջ տեղական պահանջներու համեմատ արմատական բարենորոգմանց գործադրութիւնը:

Տ. Ս. Չերազի այս առաջարկէն և Հայ պատուիրակներու ժողովարարէն մեկնուէն վերջ, Համաժողովը ստուար մեծամասնութեամբ հետեւեալ որոշումներ տուած է.

1. Հայոց օրինաւոր բաղձանքներուն իրագործումը, հայաբնակ նահանգներու տեղական վարչական կազմակերպութեան մասին եւ միւս բոլոր նահանգներուն համար:

2. Հաստատումն կեդրոնական կառավարութեան մը, որ ըլլայ ազատական գաղափարներու վրայ հիմնուած եւ ապահովէ ազգային իրաւունքներու պահպանումը, ինչպէս նաեւ գաւառական վարչութեանց կանոնաւոր գործառնութիւնը եւ որմէ Հայերը նոյն աստիճանով և միեւնոյն չափով օգտուին ինչպէս կայսրութեան բոլոր մարմինները:

Համաժողովին այս որոշումը գրեթէ ճշգրիտ կը համապատասխանէ Հնչակեան, Դաշնակցական և միւս հայ պատուիրակներու ըրած յայտարարութեան, զոր մեր նախորդ թիւի առաջին սիւնակին մէջ հրատարակած ենք:

Այժմ կը սպասենք այդ Ազատական թիւի քերական գործունէութեան շնորհիւ բացուելուն: Դիտարկաւոր իրենց յայտագրին մէջ բնաւ չէ յիշուած թէ րոտուած Մեղլիքեքի ֆինանսաւորը դիւս նախկինական միջոցներէ զատ ուրիշ ինչ միջոցներու գիծելու արտօնուած է. անադարութիւնը դէմ բողոքելու և րոտութիւնը տապալելու համար գրիչէ և լեզուէ զատ ինչ զէնք պիտի գործածէ:

Մեղլիքեքի խմբագիր որ հակառակեցաւ մեծամասնութեան որոշումներուն, իրեն միակ զէնք ընտրած էր լեզու և գրիչ, և այսօր զատուած է: Բայց մեծամասնութեան րոտուած գործիւն եղաւ նախ մեզ կը հետաքրքրէ, զի մեր վստահութիւնն իրենց գործելու այդ եղանակէն կախում պիտի ունենայ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀԱՅ. ՅԵՂ. ՄԱՐՄԱՐԵՆԵՐՈՒՆ

Հայ ժողովուրդը իր ճակատագրի մէկ նոր դժնէ հանգոյցին նախընթերցին մէջ կը թուի ըլլալ:

Վաղուան օրը կամ մահոյցի զօղանջ մը պիտի ըլլայ իրեն համար կամ հզօր աւետարան ձայնը կոռուի գացողներուն:

Վաղուան օրը մեր օրհասին ամենէն ճգնաժամային րոպէն պիտի ըլլայ գոյցէ:

Պատրաստ ու վստահ պիտի դանձմեղի վաղուան օրը այդ կոռուին համար:

Հարազատ ծնունդը իր նախնական վաղուան օրուայ ծայրայեղ դժբաղդ կամ երջանիկ բաղդը, այսօրուայ այս կամ այն աստիճանի եռանդուն, այս կամ այն աստիճանի անհանգիստ ջանքերու եւ կամեցողութիւններու հաւատարիմ պտուղը պիտի ըլլայ:

Պատուաւոր յեղափոխական, ունեւոր թափառաշրջիկ, չէզոք կամ կուսակցական, բոլոր անոնք, մէկ խօսքով որ հայութեան դարաւոր տառապանքներու որդիներն են այսօր, բոլոր անոնք որ դեռ երէկ բռնութեան երեսէն մահուան սպառնալիքի ժանտ ցայտումը կը տեսնէին, բոլոր անոնք որ լաւ գիտեն թէ ինչ ըսել է թիւրք կառավարութիւնը եւ ինչ է այն որ կը կոչուի թրքական լուծ:

Եւ բոլոր անոնք, վերձայն որ Հայ անունը տակաւին կը կրնն իրենց անձին վրայ, աւելին ալ խորին անքակտելի կերպով կաշկանդուած են այդ պատասխանատուութեան տակ:

Բայց ամենէն աւելի եւ ամենէն խիստ պատասխանատուութիւնը կրնայ ձեր, յեղափոխական մարմիններու վրայ:

Դուք էք Հայաստանի ժողովրդեան յոյսն ու լոյսը, ու ձեր յոյսն է որ կապրեցնէ զիրենք դաժան ճակատագրի մը սպաննող ճնշումներուն տակ:

Դուք էք Միսիան, զոր կապաւն ան դեռ ամեն առաւօտ եւ որուն գալստեան յոյսով կը փակէ միշտ իր աչքերը:

Որովհետեւ դուք էք որ կը խրախուսէք զինքը, կը յուսադրէք զինքը, կապրեցնէք զինքը ձեր յուսադրութիւններու եւ խոստումներու անսպաս միջերգով ու ձեր ախուր յարաբերական էութիւնը անձանթ է իրեն:

Երբ նոր Սերբներ ծնի ան իր մէջ, որոնք Տարոնի աստուածացած քաջին

միասնական յաջորդող դասն մահա-
ցու յուսմամբ թեան եղբայրական օ-
րինակէն խրատուած, Անդրանիկի
արհամարհող ու գիտակից հեղինակն
ունենան ձեր հանդէպ, հիասթափ-
ուած ժողովրդին զայրոյթը անողոք
պիտի ըլլայ ձեզ դէմ (°):

Սերոբները ձեր խառնուիկ եւ ա-
նողորմ ազդեցութեան զօհը եղան, ե-
կած է օրը ձեր միութեամբ ձեր ան-
կեղծութեամբ եւ ճշմարտ յեղափո-
խական վերակազմութեամբ քաղաք
այդ մեղքը:

Եթէ այս անգամ ալ ի դերու ելլան
յեղափոխական ժողովրդին յոյսերը,

եթէ այս անգամ ալ ճգնիմ հաշիւ-
ներու պարտապան խառնուած եւ
առարկութեամբ լինենք մէջ խեղդուին
իր պահանջները:

Եթէ այս անգամ ալ կուսակցական
ո եւ է իմաստակութեան տակ քողար-
կուած հացի կամ փառքի գծում դի-
տու մեծ կարողանան, առանց հոռ-
դակելու ձեր ընդդիմութեան, ար-
գիւր ըլլալ միութեան:

այն ատեն աներկբայ եղէք, որ
գիտակից կամ անգիտակից՝ ամենէն
մեծ ոճիւրդ գործած պիտի ըլլաք,
կրկին լքելով խնամ ժողովուրդը եւ
կրկին ձեռք գարնելով մրցման ձեր ե-
ղբայրական կերպական անկարելի դե-
րին մէջ:

Եւ եթէ ձեր մէջ կը գտնուին այն-
պիսիներ որ միամտօրէն յամառին ո
եւ է թագուել գրծի մը անգիտակից
գործիքն ըլլալ, իրենց ո եւ է խեղա-
լանան կամ սկզբունքային խառնու-
վածութեան մէջ խառնուելով սնտաի
եւ միանգամայն ներգամբտ թելադ-
րութիւններէ, որոնք միութեան իրա-
գործումին մէջ գաղափարական բա-
ցարձակ հակասութիւն մը ցոյց տալ
կուզեն անոնք:

այնպիսիներուն վերջին անգամն
ըլլալով կը կրկնենք որ Հայ ժողովուր-
դին ներկայ ամենէն անխտաճգելի
պահանջը ազատութիւնն է:

այդ ազատութեան հասնելու ամենէն
ապահով ճամբան յեղափոխութիւնն է:

յեղափոխական գործի այդպիսի ար-
դիւնաւորութեան մը ամենէն առա-
ջին եւ միակ պայմանն լիարժեքն է:

Հայ Յեղ. Միութեան Յանձ-
նատեսներու Պատգմ. Ժո-
ղովի Կողմէ

Քարտու դար Նախագահ
ԶԱՐԲԱՅՐ ԿԱՅՄԻԿ-ՀԱՅԿՈՒՆԻ
20 յունվար 1902 Վ. քաղաք

(°) Ինչպէս կը հասկցուի, այս պար-
բերութիւնը իր ետեւ գաղտնիք մը կը
վարագործէ, որ, կը յուսանք թէ, քիչ
ատենէ բացուի ու կտրգ մը պոռոտա-
խօսները դիմակալափ ընէ: Մ. Խ.

ԳԱՒԱՌԱՑԻՒ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Բարեկամս Վարդ,

Դեկտեմբեր ամսուն սկիզբն էր,
ձմեռային ամառ օր մը, հրը
յոգնաբեկ որսորդութենէ կը վերա-
դառնայի, մեր քաղքին ցրուիչը
նամակ մը ինձ ներկայացուց. ան.
համբեր՝ պահարանը բացի ու աշ-
քերս դէպի ստորագրութիւնը
տարի. ո՛ր անակնկալ, ո՛ր բարե-
բաղդութիւն, քու անունդ հոգ
կը գտնէի:

Հատալ որ, Վարդ, ինծի նա-
մակ գրիւղդ չէի սպասեր, քու
երկարատեւ անհետացումդ ի վեր-
կը յիշե՞ս մեր վերջին տեսակցու-
թիւնը, որը, իմ մասին, երկկի
պէս յիշողութեանս մէջն է, երբ
ես, դուն ու Ահարոնը մեր դա-
լարագեղ պարտէզին մէկ կող-
մը մեղկօրէն ընկողմանած, ճշդիւ
ազգային դարձ դէպքերու վրայ
կը խօսակցէիք. եթէ յիշողու-
թիւնս զիս չի պատրեր, նոյնիսկ
ձեռքիդ մէջ ունէիր Հնչակի վեր-
ջին պրակը, կարմիր գոյնով
Հնչակ մը, ուրկէ ոգեւորութեամբ
կը կարդայիր մեզ նախաօդուածը,
«Եւրոպայի միութեան կիլիկիայում»,
որ կիլիկիոյ բովանդակ քաղաքնե-
րուն, Չէյթանի, Հաճընի, Չօկ-
Մարգուանի միանուագ ապստոմ-
բութիւնը կաւետէր, հայկական
բանակներու յաղթական յառաջ-
խաղացումին մասին «Հայ ժողո-
վուրդ»ին խանդավառ կեցցէներ
ուղղելով:

Բայց ո՛ր մնացին այդ երբեմնի
ձիւնադնդերը, ինչպէս պիտի ըսէր
Փրանսական շրջապատուածք...

Ճակատագրային զուգահեռու-
թիւն, այդ միջոցին իսկ էր որ
յանկարծ հրացաններու բոմբին.
ներ թնդացուցին մեր ականջները.
մինչ, չփոխած, երեքնիս ալ բա-
ցարձակօրէն տակաւին կանգի-
տէինք մեր վրայ ծանրացող երկ-

նային պատուհասը, յանկարծ ա-
հաբեկ հանդիսատեսները եղանք
քստմեղի իրականութեան որուն
զոհ կերթային ամիսներէ ի վեր
մեր տարաբաղդ հայրենակիցները:
Գիտնալու ես տխուր հետեւանքը.
մեր քաղաքը աւերեցին, ու մեր
դժբաղդ ազգակիցներէ ստուար
մաս մը խողովողցին. կը նախընտ-
րեմ այդ ցուալի դէպքերու վրայ
առայժմ աւելի չծանրանալ, միայն
թէ այն ատենի մեր ահաբեկ քա-
ժանուած մեզի համար վերջնական
եղաւ. այնպէս որ այն օրէն ի վեր
ողջ կամ անկենդան ըլլալուդ մա-
սին որ եւ է ծանօթութիւն ունե-
նալ ինձ անկարելի եղաւ, ու բնա-
կանօրէն պիտի շարունակէի այդ
վարանումս մէջ տարուբերութեւն.
Եթէ քու վերջին նամակդ զիս
չտեղեկացնէր թէ, քաղքէ քաղաք
արկածալից դեպքերուն հետք
վերջապէս Աւերիկեան հողը հաս-
տատուելու որոշուած տուած ես:

Թող տուր, բարեկամս, որ իմ
խորին ու սրտային շնորհագրա-
տութիւնս յայտնեմ այդքան հե-
ռունքէ զիս յիշուել քու այդ ազ-
նուածի վարձուքիդ համար. բա-
րեկամութիւնը, կըսեն, երկու ան-
հատի անընդհատական փոխադարձ
չփոփոխելի միայն կանգուն կրնայ
մնալ. ու սակայն քու նամակովդ
հակառակ դուն կը հաստատես:

Միւս կողմէ եթէ քեզի չափ—
ու քեզմէ աւելի կը բաղձամ որ
մեր յարաբերութիւնները անընդ-
հատ շարունակուին, կը մոռնամ
թէ մեր իղձերուն ընդդիմացող
կամքներէս անկախ որքան պարա-
զանք կան, որոնց առջեւ խոնար.
հիւր լաւագոյնը ու միակ տրա-
մաբանականն է: Երկրորդ անգամ
մը ըլլալով տեղույս իշխանու-
թեանց կողմէ նամակիդ մասին հար-
ձուփորձի ենթարկուեցայ, ու
ընականաբար պատուհասը ինձ ան-
խուսափելի էր, առանց մեծկակ
կաշառքներու օգնութեանը: Քեզ
մէ չեմ պահանջեր որ ալ ինձ նա-
մակ չի գրես, գիտես թէ զիս

թշնամանելու լաւագոյն միջոց մը
չէիր կրնար գտնել. միայն քեզմէ
պիտի խնդրեմ որ ինծի ընդհան-
րապէս բաց նամակներ ուղղես:

Մնաց որ, փութամ քսելու,
դժգոհ չի մնացի որ փափաքեր
ես ազգային առօրեայ խնդիրնե-
րու մասին իմ անեղծ (°) խոր-
հրդածութիւններս ճաշակելու...

Արտասահմանի մէջ՝ ըսեր էիր
հեղինակէն, այնքան տափակ որքան
անմիտ, սնափառ որքան ամուլ վի-
ճաբանութեանց կամ աւելի ճիշդը
արհեստաւորի անհատական փա-
ռաւորութեան հանդիսատես եղեր
ես, որ դատելու յատկութիւնդ
իրապէս փութացիր է, հետեւապէս
ինձ կը դիմես ու յանուն մեր բա-
րեկամութեան կը պահանջես ինձ.
մէ որ ազգային խնդիրներու մա-
սին իմ տեսութիւններս ու համո-
զումներս քեզ ներկայացնեմ:

Երտակը կղզամ որ իմ աչքիս
ինչպէս քու աչքիդ զիս տարօրի-
նապէս կը մեծցնես, քեզմէ աւելի
միտք ու հմտութիւն ինձ կենթադ-
րես. մինչ քիտես թէ քու իմա-
ցական ու բարոյական մշակումդ
որքան անհուսաւարապէս զիս կը
գերազանցէ. սակայն ու անպէս
քու պահանջումիդ զոհացում չի
տալէ հեռի, ընդհակառակը քեզ
երախտապարտ իսկ կը մնամ որ
յարժար պատեհութիւնը ինձ չես
զլանալ սրտիս ու քու սրտիդ ինչ-
պէս ամեն ճշմարտօրէն հայ ան-
հատի սրտին—այնքան մօտիկ խըն-
դիրներու վրայ ընդլայնօրէն քեզ
խօսելու, ոչ թէ քու վրադ խոր-
հելու, դատելու կամ ներհնու-
թեան որ եւ է իրական մէկ գերա-
զանցութեան վրայ հաւատ ըն-
ծալելու չափ անմիտ ըլլալուս—
գիտես թէ անհասնելու վրայ մե-
ծագոյն ու յոռեգոյն թերութիւնը
կը համարիմ այլ վասն զի թէ իբր բարեկամ,
թէ իբր հայրենակից, ազգային
հրատապ խնդիրները խորհրդա-
ծութեան առարկայ ընելը մեր ա-
մենէն աւելի նուիրական պարտա-

ԹԵՐԹՕՆ, ԻՐԱՆԻՆՔ

ՅՈՒՆԱՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախ. քիւնէն)

Եւրոպայի ձերութիւնք Յունական
խնդրոյն մէջ. — Լոնստայի Դաշնու-
դրութիւն. — Որչափ որ ի սկզբան եւ-
րոպայի ձերութիւնը հակառակորդ եւ
ընեցեր էին յունական ազատութեան,
բայց մաս մը նախին յունական յիշա-
տակը, քերթողք եւ գեղարուեստք,
մաս մ'ալ Միստոլուկիի գիւցազնա-
կան անկումը եւ այնչափ արիւնհե-
ղու թիւնք, զերեք շարժեցին կարե-
կիր աչքով մը նայելու Յունաստանի
վրայ: Ռուսաստանի ժողովուրդը կրօ-
նից նոյնութեան պատճառաւ չգտ
աժգոհ էր Տէրութեան ատարներ կե-
նադուն համար: Անպիտի մէջ ալ Լոնս-
տայի թիւնք բարձրագոյն իշխանութեան
հասնելով, չէր մոռցած իր երիտա-

սարդութեան սիրելի երազները, եւ
Լոնստայի թիւնքով բեղաբազու-
րի մէջ սահմանուեցաւ որ Անգլիա եւ
Ռուսաստան միջնորդ ըլլան Յունաց
եւ Տուրքիոյ մէջ, եւ Յունաց ինքնիշ-
վարութիւն մը տուի հարկատու
մնալով օսմանեան Պետութեան, եւ
ի Յունաստան բնակող ծածկից գուրս
եւլան հոնկէ եւ իրենց դրամական փո-
խարկութիւն մը ըլլուի, ձգած եր-
կիրներուն համար: Երկու ձեռու-
թեանց հետ միացաւ նաեւ Գաղղիա.
Աստորիա ալ կը յորդորէր գիտուել ե-
րեք ձեռութեանց միջնորդութիւնը
ընդունելու:

Սուլթան Մահմուտ վեր ի վերանց
պատասխաններ տուաւ եւ միանգա-
մայն իմացուց որ այս միջնորդու-
թիւնքը Դրփփաի, Լայպպի եւ
Վերոնայի որոշողութեանց հակառակ
էր. եւ թէ ինքը իբրեւ իշխան չէր
ուզէր որ օտարները իր երկրին խըն-
դիրներուն մէջ մասնաւ: Խնդիրը այս
կէտին մէջ էր երբ Աթէնքի առման
լուրը եւրոպա հասաւ: Այն ատեն

Անգլիա, Գաղղիա եւ Ռուսաստան
զաշխմ մը ստորագրեցին ի Լոնտրա,
որով պիտի ջանային միջնորդութեամբ
քաղաքականապէս բացարձակ բաժա-
նում մը դնել երկու ժողովրդոց մէջ,
միշտ զՅունաստան հարկատու թողով:
Իայց որպէս զի այս դաշնակցութիւն-
նին ապարդիւն չմնայ, առանձին ծա-
ծուկ կերպով որոշեցին նաեւ որ եթէ
Իարձրագոյն Դուռը մերթէ իրենց ա-
ռաջարկութիւնը, այն ատեն իրենք
ալ օգնեն Յունաց, եւ իւրաքանչիւր
Պետութիւն 12 պատերազմական նաւ
զրկէ հսկելու Յունաստանի ափանց
վրայ:

Սուլթան Մահմուտ չցիջանիլը. —
Նախաժեռի նախական պատերազմը. —
Սուլթան Մահմուտ միտքեց այս սպառ-
նալիքները ինչպէս նաեւ Մէհմէտ
Ալի ընդդէմ յորդորանաց երեք Տէ-
րութեանց հիւպատաներուն, եւ իր
որդոյն նորէն 4,000 հոգի զրկեց,
չատ մը ձի եւ պաշար:

Այն ատեն երեք դաշնակից Պետու-
թիւնք, իւրաքանչիւրը 12 պատե-

րազմական նաւ զրկեց Յունաստանի
եզերքը: Նախ Անգլիացի օգ նաւատոր-
միդը հասաւ, որուն հրամատարն էր
Սիր Էդուարդ Գոտրիկիլըն ծովա-
կալը, որ շատ յորդորեց զԿարաիմ
փաշա զինադադարումն ընելու, որ
չընդունեցաւ: Քիչ վերջը հասաւ նաեւ
գաղղիացի նաւատորմիդը որուն հրա-
մատարն էր ալ Ռենուի եւ ստիպե-
ցին զԿարաիմ զինադադարումն ընե-
լու. մինչեւ որ Կ. Պօլսէն եւ Աղեք-
սանդրիայէն նոր հրամաններ ընդունի:
Հոկտեմբեր 18ին հասաւ նաեւ Ռու-
սաց նաւատորմիդը որուն կը հրամայէր
Հայտըն ծովակալը:

Սակայն Կարաիմ ծովը թողուցած
սկսաւ ցամաքի վրայ նեղել զՅոյնս:
Երեք ծովակալք չէին գիտեր ինչպէս
չարժիլ, որովհետեւ իրենց պատե-
րազմու յայտնի հրաման տրուած
չէր, ալ իրենց խնդիրներն թող-
ուած էր: Վերջապէս սահմանեցին ծո-
վու կողմանէ պաշարել Տաճկաց նա-
ւահանդիսները եւ այնպէս ստիպել
զԿարաիմ ետ կենալ թշնամութենէ:

կանոնները համարելու ենք... ու կապահովենք քեզ թէ յօժարակամ ինձ ենթարկած խնդիրները վրայ համապատասխան քեզ պարբերաբար ներկայացնելու պիտի չի թերանամ։ Ու իբր սկզբնաւորութիւն կը խոստանամ առաջիկայ նամակովս աւելի կարգաւոր պարբերութիւններ քեզ ուղղելու, երբ քու անակնկալ երեւումը ինձ պատճառած զարմանքը ալ պիտի անհետի։

Ուրեմն ցտեսութիւն։
Գոյդ
.....

16 Յունվար 1902

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարինէ փետր. 9 թուով կը գրենք։ — Մի քանի օրէ ի վեր անընդհատ տեղի ունեցած ընդերկեայ որոտումներով բռնուցնող սարսափահար ժողովրդեան սիրտը թունդ հանեցին, մանաւանդ այս պահուստ, որ կենաց և մահու մէջ կը տարութեան։

— Չնայելի վաճառի հոգիներ՝ որ հազարաւոր իրա կարծեն, օտար ոտնձգութիւններէ ազատելու համար Պատրիարքարանը կառավարութեան նոր դիմումներ պիտի ընեն։ Այդ հոգիներն վաճառի սեփականութիւնը ըլլալը երկար դատաւարութիւններով վերջնականապէս հաստատուած ըլլալուն հակառակ, դատարաններէ ստացուած վճարները դեռ չեն գործարկուած։

— Կայսերական պալատան բըժիշկ և Պոլսոյ բժշկական վարժարանին ուսուցիչ վահան փաշա Մանուէլեան անցեալ ուրբաթ օր յանկարծամահ եղած է։ Յուշարկաւորութեան ծախքը Սուլթանի անձնական գանձէն յատկացուած է։ Վերջին քանի մը ամսուան մէջ Յարութիւն Տատեան, Ստեփան Աւանան և վահան Մանուէլեան երեք հայ փաշաներու յաջորդա-

կան մահերը անշուշտ կորուստ մը չեն ճանաչարար համար։ Կարծես այս պատկան հայերն ալ խօսք մէկ րրած իրենց տղաակիցները տանջող ու խոչնդող կոտորութիւններէ մերթնալանապէս բողբոջած ըլլալու և անոր տուած շքանշանները ու տիտղոսները երեսին նետելու համար աշխարհէն ալ կը հրաժարին։ Երբեմն ծանծաղամտ թուրքեր ալլելու խօսք թող չունենան ըսելու թէ «Սուլթանը հայ ազգէն ալ ինչ ընէ, այնչափ հայեր փսշաւ րրին է»։

— Վահան վրդ. Տ. Մինասեան ինքն առաջարկեց է պատրիարքարանի թէ պատրաստ է Ափրիկեան Տրիպոլիոյ հոգեւոր հովուութիւնը ստանձնելու։ Կը յուսացուի թէ խառն ժողովը իր վերջին նիստով ընդունի վահան վարդապետի առաջարկը։ Կերեւայ թէ Վարդը ցարդ իր ապրած միջավայրին մէջ ալլելու օղիի ստակ չկրնալ ճարելով Ափրիկէ երթալ յանձն կառնէ։ Մինչդեռ պատրիարքարանը ոչ թէ վարդապետ կամ քահանայ, այլ տիրացու մը իսկ զրկել չի յաջողելով խնդիրը Եզրպատսի առաջնորդին յանձնած էր։

— Բաղէշի Որբանոցի հոգաբարձութիւնը խնդրած է պատրիարքարանէ որ այս պատասխարանը տարի մըն ալ հաստատ մնայ։ Որովհետեւ սա որբանոց մը ըլլալէ աւելի կրթարան մը եղած է, ուր որբերը գոհացուցիչ կրթութիւն կը ստանան և 8—10 տաներ յառաջիկայ շրջանին ընթացաւորտ պիտի ըլլան։

— Սկիւտարի մէջ Գարակէօզեան որբանոց կառուցուելիք գիտինը ճարտարապետ Կարապետ ամիրայի ժառանգորդները յօժարական կը նուիրեն Ազգ. բարեկատակ հաստատութեան համար, միայն վագրֆ ըլլալուն պատճառով ամիրային երէց դուստրը, Տիկին Սողոմիկ Տատեան, Միւ-

թէվէլիութեան իրաւունքը իրեն վերապահել կուզէ։

— Ս. Էջմիածնայ Սինոդը 3000 ռուպի նուիրեր է Շամախու երկրաշարժէ ֆէն անուանուող շինարարութեան։ Նոյն պէս վեհ. կաթողիկոսը իր անձնականէն 4000 ռուպի յատկացուցեր է այդ արկածեալ քաղաքի հայ եկեղեցիներուն։

Կովկասի հայ շրջանակներուն մէջ արգէն հանգանակութեան ձեռնարկուած է։ Չարը և Չա. ռուհին մեծագումար նպաստներ տուած են ընդհանուր արկածելոց։

— Կ. Պոլսոյ Մար-Եկեղեցւոյ նորոգութեան պիտի ձեռնարկուի Չասկէն անմիջապէս վերջ. հազար ոսկիէ աւելի ծախք մը նախատեսուած է։

— Հինգշաբթի Ս. Վարդանանց տօնին առթիւ տեղւոյս եկեղեցիին մէջ հանդիսաւոր Պատարագ մատուցուել վերջ, կոկիկ հանգէս մըն ալ կատարուեցաւ ի ներկայութեան երկսեռ խումբ բազմութեան։ Միայն պէտք է դիտել տալ թէ հակառակ քահանային ազդարարութեան, եղած ծափահարութիւնները և երկու փոքրիկ ներու արտասանած կատուի մուկի մաւաշները տեղւոյս և պարագային անյարմար էին։

— Տ. Եղեկիէ վրդ. Տրքարանակերտի առաջնորդ ընտրուած ըլլալով, Պատրիարքարանը անոր ընտրութիւնը վստահացուցած ու յանձնարարած է մեկնիլ իր պաշտօնատեղէն։

— Իլմիթի Ազգ. հիւանդանոցին հարկւրման յարեկանին առթիւ Մանչեսթրի մէջ կատարուած հանգանակութեան 100 ոսկիէն արեւի գումար մը գոյացած է։ Հանգանակութիւնը կը շարունակուի։

— Չարչանքի հայ բողբոջական պատուելին իր վարժարանի հայ որբերուն չէ թողաւորած Ս. Շանդեան տօնին ազգային եկեղեցին երթալու, հակառակ որբե-

րուն թախտահանաց։ Աժօթ ան պատուելին։

— Բրօքսիոնէն Կարնայ արկա. ծիոց ինչպէս 1800 ֆր. զըրկուած է Պատրիարքարան։

ՍՈՒՏ ՄԵՌԵԱԼԸ

Փոքր Արմատնէ ստացուած փետր. 4 թուակիր նամակ մը Նիքոբոլի մէջ կրկին ամուսնացող խաչիկ Պետրոսեանի ընտանիքի մասին սրտաճշիկ յուրեր կը հաղորդէ։ Այդ անխիղճը՝ որուն հայրը, մայրը, կինը և զուակը ողջ են ու խեղճութեան մէջ կը տառապին, կեղծ նամակ մը գրած է իր ծնողաց «Մարգիս Բովհաննէսեան» ստորագրութեամբ թէ խաչիկը մեռած է։ Այս սեւ նամակը կարգաւոր բոլոր ընտանիքը ողբակոծի սկսեցին։ Բարեբաղդաբար գիւղին մէջ գըտնուել է մէկը՝ որ խաչիկին խաղաղ բնաւորութեան ծանօթ ըլլալով, կրցեր է նամակին պարուսեղանին և ոճէն կռահել թէ անոր բուն իսկ հեղինակը խաչիկն ու կնոջ թախտահանքին վրայ նամակ մը գրած է Պուլիպիոյ մէջ ծանօթ անձնաւորութեան մը որ խաչիկին ողջ կամ մեռած ըլլալը հաստատէ ու իմացնէ։ Բայց դժբախտապէս այդ անձնաւորութիւնը խաչիկին բարոյական մահը իմացնել դատապարտուած է այսօր։

Այդ, կը մնայ մտածել թէ այս բօթը երբ իմանան անոր ծնողքը, կինը ու զուակը՝ որոնք եօթը տարիէ ի վեր կը սպասեն իրենց միակ յոյսը ու մխիթարութիւնը եղող խաչիկի վերադարձին, ինչ հոգեկան դուռն ու զգլխի մորմոքումի մը պիտի մատուցին։ Մօտէն չի տեսք թէ Հայաստանցի ընտանիքի մը այս տեսակ կորուստը աւելի դուռն ազդէ քան թէ իսկական մահը։

Նաւատորմաց ընդհանուր հրամանատարութիւնը հնազոյն ծովակալին Լորտ Գոտրինկիթընի տրուեցաւ, որ ամենպատասխանութիւն տեսաւ եւ 20 ինքնոր նաւերը, որոնց պարագլուխն էր Աւիա, Նավտինի նաւահանգիստը բռնեցին, զէմ յանդիման տաճիկ նաւատորմին, մանաւանդ թէ գաղղիացի Սիրիս, նաւը մեծ յանգցուցութեամբ Տաճկաց նաւերուն մէջ պարագլուխը մը բռնեց։

Դաշնակցիք բնաւ թշնամութեան միտք չունէին, բայց երբ Անգղիացւոց նաւերէն մին հրաման մը կուգէր հաղորդել թաքի փաշա ծովակալին, յանկարծ գնդակ մը կը վերաւորէ մակուկին գլխաւորը։ զիմացի նաւէն պատասխան կը տրուի եւ արձագանքը շուտով կը տարածուի ծովուն մէջ։ Լորտ Գոտրինկիթըն կուգէ գաղղիացիները և նաւակ մը կուղղէ առ տաճիկ հրամանատարը որ կը կը դադրեցնել տայ։ Բայց հրացանի հարուած մը կը սպաննէ մակուկին գլխաւորը, եւ ուրիշ թնդանօթի հարուած մ'ալ

կը պարպուի Սիրիսի վրայ։ Գաղղիացիք այս հարուածին կրակով պատասխան կոտանի եւ քիչ վայրկեան մէջ անաւոր կոխ մը ամեն կողմ կը տարածուի։ Թանձր ծովի մը նաւերը կը ծածկէ, որուն մէջէն շարունակ փայլակներու աղօտ լոյսը կը տեսնուի եւ ուղիներուն ձայնը նաւերուն շարժման ձայնը կա գիւլու։ Սակայն եւրոպացի ծովակալաց հարուածք բնաւ չէին վրիպիր։ 110 նաւ ծովուն վրայ կը մրցէին։ արգէն այլքները սկսեցին էին արեւմտ ներկուիլ եւ նաւերուն այրելու եւ ճախմանց ձայները որոշ կը լսուէին։ Երկուսիցս ժամը 5ին Տաճկաց նաւատորմին առաջին գիծը ջախջախուեցին։ Ժամը 7ին ծովուն երեսը միայն 20 հատ պղտի նաւեր լքեալ մնացին էին։ Այսպէս հրացանի հարուած մը Տաճկաց կողմանէ կորսուցուց 6,000 հոգի եւ 62 նաւ ընդ մեծ եւ ընդ փոքր։ Իսկ գաշնակցաց կողմանէ միայն երեք նաւ քիչ մը վնասուեցան, 140 հոգի մեռած էին, 300 ալ վիրաւոր։ Նավարին եւ Մու-

թուն բերդերը գրկէ հիմնադրական կործանուել էին։

Նավարին պատերազմը զնուաւոր տան վեր բարձրացուց յուսահատութեան, եւ զաշնակցից Պետութեանց վրայ զանապստ ազդեցութիւն ունեցաւ։ Ներկայայտ կայսրը ուրախութեան թիթիկ գրեց առ անգլիացի եւ

(*) Երբ կարողութիւն իր աքսորանաց միջոց ա'ւելիլը նաւապետին գիմաց կը պարծէր Նավարին պատերազմին համար, ա'ւելիլը պատասխանեց. «Անգղի մը նամար շատ զգաւոր իր մէջ ալապիսի սովորական գործ մը այնքան վեր բարձրացնել։ Եթէ տը Ռիսիս այսպիսի գործ մը համար մեծ մարդ է, ինչ պիտի ըլլար իր արժէքը թէ որ հաւասար զօրութեամբ անոնց։ Այսպիսի գովեստներ Ռիսիսին, Տիւկէյ-Բրուէնի եւ ա'ւելիլը համար նախապիւքներ պիտի ըլլային»։ Յիշատակարանի Տիւրքիսի ճառարանին։

գաղղիացի ծովակալները, եւ Ռիսիսի Ս. Աղեքսանդր-Եփեսոսի նշանը տուաւ, Գոտրինկիթընի ալ Ս. Գեորգիոյ իսկ Անգղիա մեծապէս սնանեցաւ Տաճկաց յաղթութեան վրայ, վախաւով որ չըլլայ թէ ասով Ռուսաստան զօրանայ Սեւ ծովուն վրայ։ անոր համար ոչ միայն Լորտ Գոտրինկիթըն Սիւրբ-Բաղանի ծովուն նաւատորմին հրամանատարութիւնը կորսնցուց, այլ նաեւ 1828ի խորհրդարանի բացուելուն Պաշտօնարանը այն պատերազմը ձախորդ դիպր անուաճ կոչեց, եւ որուն համար մեծապէս տնաճած էր վարչութիւնը։

Թուլթան Մահմատ բողբոջից իրենց դրօշին զէմ եղած նախատանաց համար, յայտնի փոխարինութիւն մը պահանջեց թէ՛ բարոյական եւ թէ՛ դրամական, եւ մզկիթներուն մէջ սրբազան պատերազմ քարոզուեցաւ։

Զ. Ս. ՆԻՐԻՍԱՆ
(Շարունակելի)

ՍՕՅԻՍԱԼԱՆ ՄԵՔԹՈՒՊ

Սոցիալատաքի մուխպիրի մասնա-
սուսըմըզումն սոն սատթտու գա-
պուլ իթտիկիմիդ չու մէքթուպր
իչպու սուհիթէտէ աշնէն նէշր իթ.
մէյէ մէհպուր օլտրզ .

ՍՕՅԻՍԱՆ, 21 Փետրուար

Կիրակի օր, 17ին կատարուեցան
ամբողջ Պուլկարիոյ մէջ Ազգային Ե-
րեսփոխաններու ընտրութիւնները .
որոց արդիւնքը հետեւեալն է .

Յատաջողման (Յանքովիսթ)	80
Ազգայնական (Սթոյիյովիսթ)	37
Ազատական (Րատսլովիսթ)	11
Հողագործական (Րէչպէր)	12
Ռազմավարական (Փարալէլիսթ)	18
Սթամպուլովեան	11
Բնկիվարական (Սոսիալիսթ)	7
Չեզոք (Պիթարաֆ)	2

178

Կրկին տեղեկէ ընտրուած միւս-
նոյն անձերու տեղ նորէն ընտ-
րուելիք

11

189

Այս ցուցակին համեմատ կառավա-
րութիւնը մեծամասնութիւն կազմը
ուստի եւ Տօթթ. Տանէվ ինքզինք
պիտի գտնէ միւսնոյն Սօպրանիէին
առջեւ ինչ որ էր նախորդը . չատ
փոքր փոփոխութեամբ :

Այսու հանդերձ կառավարականք
յուսման չեն թուիր . դեռ ընտրու-
թիւնները չկատարուած Սթամպու-
լովեան կուսակցութեան հետ համա-
ձայնութեան գտլու ճիգեր կըլային .
գոյրատարար անոնք ալ չնչին թիւ
մը կը կազմեն այժմ :

Բայց դեռ խնդիր է թէ կառավա-
րութիւնը այս անգամ ի՞նչ տեսակ
փոխառութեան ծրագիր պիտի ներ-
կայացնէ . Փարիզեան դրամատան ծխա-
խոտի մեծաշնորհին պայմանները պի-
տի ներկայացնէ թէ ոչ ուրիշ մը որ
գէթ առաջինէն աւելի մեղմ եւ զիւ-
րատար ըլլայ : Անուրանալի է թէ ա-
ռանց փոխառութեան Պուլկարիա իր
անտեսական կացութիւնը չպիտի կա-
րենայ բարեփոխ . ասոր ամեն ոք
համոզուած է . ուստի որչափ որ կա-
ռավարութիւնը ջանալու է երկրին
աւելի նպաստաւոր փոխառութիւն մը
կնքել . նոյնպէս ալ Ազգ. Երեսփո-
խանութիւնը այս պարագային . կա-
ռավարութեան իր աջակցութիւնը
զլանալու չէ . մոռնալով կուսակցա-
կան սին վէճերը եւ անօգուտ պայ-
քարները :

Կը խօսուի թէ Անտէրպանքը .
Քրէտի Լիօնէն եւ ուրիշներ փոխա-
տուութիւն առաջարկած են կառավա-
րութեան զիւրամատչելի պայմաննե-
րով :

Իշխանը որ արտասահման կը գըտ-
նուի . մի քանի օրէն պիտի վերա-
դառնայ աստ :

Սոպրանիէին բացուի Մարտ 4ին
պիտի կատարուի :

Նորընտիր թաղական խորհուրդը իր
պաշտօնին ձեռնարկելէն ի վեր ազ-
գային գործերը կանոնաւոր գրու-
թեան մը վերածելու համար ամեն աշ-
խատանք կը թափէ : Քահանային հետ
վերջնական կարգադրութիւն ընելով
ամսական մասին . մնայուն հոգեւոր
հովիւ կարգած է զայն : Պիւտեթի
խնդիրը հաւասարակշիռ բնուի հա-
մար չեն խնայիր իրենց ճիգը : Շիտակը
գովելի եռանդեամբ կը ջանան ամեն
կերպով օգտակար հանգիստնալ եկե-

ղեցոյն եւ ազգին եւ ցարդ մեր տա-
ծած լաւ յոյսերը իրականացած տես-
նելու բարեբաղդութիւնը պիտի ունե-
նանք :

Միւսին թէ կիրակի իրիկուն Տէր
Մանգուկունի հօր յանկարծական մեկ-
նումը ի վիշտնա մի քիչ . անհաճոյ
առարկութեանց տեղի տուաւ : Վիշն-
նաէն մէկը հեռագրով կը հրաւիրէ
քահանան ամուսնութիւն մը կատա-
րելու եւ քահանայն առանց արտօնու-
թեան թաղ. խորհրդին անմիջապէս կը
մեկնի : Փափաքելի է որ նման առիթ-
ներու մէջ ասոր կրկնութիւնը տեղի
չունենար :

Այսօր կէս օրէն առաջ ժամը 10ին .
եկեղեցւոյ մէջ ունեցանք ազգային
հանգէս մը . Վարդանանց հանդէսը .
Ճառախօսութիւններ եղան . երգեր
երգուեցան եւ մի քանի փոքրիկներ
ոտանաւորներ արտասանեցին : Առաջին
անգամ ճառախօսեց Տիար Ասատուր
Մկրտիչեան : Վարդանանց պատերազ-
մին եւ պատերազմը յառաջացնող նոյն
ժամանակուան հանգամանքներու
պատմական նկարագրութիւնը ընելով
եւ ասոնց սկզբնապատճառ մեր նախ-
նեաց եւ նախարարներու անմիաբա-
նութիւնը ցոյց տալով . ու մեր ներկայ
դժբաղդ կացութեան մէջ միութիւն
եւ սէր կարգադրուի :

Երկրորդ ճառախօսն էր Տիար Ար-
տաշէս Փանիկեան մտացի եւ հայրե-
նաւէր երիտասարդ մը : Ասկէ վերջ
հանգստեան շարական մը կարդացուե-
ցաւ եւ պարզ «հոգեցնող» մը վերջ
գտաւ հանդէսը . որովհետեւ ինչպէս
վերը րադատուեցաւ . քահանանիս
բացակայ կը գտնուի քաղաքէս :

ԱՐՄԵՆԱԿ

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻԱ

Աժանս Հալիսուն Շամտան գա-
պուլ իթտիկի պիր թէլէկրաֆա
պիտայէն . Ֆուատ Բաշա Շամա
եթիլմէսինտէ ատի պիր ճանի
կիպի պիր գալէտէ հապս օլընմը
տըր :

— Սթամպուլումն թաւան պիտի .
րիտիկինէ կէօրէ . Միս Սթօն
եազլն վազըթտա սէրկիւզէտինի
հիքեայէ իթմէք իսթմէթօր . զան-
նիյաթա կէօրէ . մէզպուրէ իշտէ
մլտիւլի օլտի Մսկիդանիա գօ-
մրթէլէրինի թէլիքէյէ իյգս իթ-
մլքտէն իճթինապ իտէր իմիշ :

Իքի Ամերիկա կազէթա մուխ-
պիրլերի պիրլէր տէֆս կէօրիւմէք
իշին Միս Սթօնա պիշէր լիրա
վատ իթմիշէր տիր :

Շուրասը ճալիպի տըզգաթ տըր
քի՝ մէզպուրէ սապս սաթթ ծտէ
Սթրումիցա ճիվարընտա զապթի .
յէ մէքէլինէ եթիլիւպ . «չիմտի
չու եազընլարա գստար շաղիլէր
պիզի կէթիւրուպ . այրըտըլար»
տէմիշ տիր . թիւք հիքիւմէթի-
նին հէր թարաֆը նէզարէթ վէ
մուհաֆապա ալթընա ալմըջ օլտը-
ղը հալտէ . սինօրտան 160 քիլօմէթր
իրագ օլան մէզքիւր նօզթալա
գատար շաղիլէրին բէրվաթըզ կէ-
լուպ վէ եազայը էլէ վէրմէտէն
նապէտիտ օլմուշ օլմալարը հէր :

քէսի թաաճիւպ վէ հէյէճանտա
պըրագմըջ տըր :

ԻՆԿԻԼԹԵՐԱ

Հարպիյէ նազըրը . Մ. Պրոտ-
րիք . Բարլըմանտա հարպիյէ պիւտ-
ճէսինի իպրազ իտէրէք . Ճէնուպի
Աֆրիգա մուհարէպէսինէն իլէրի
կէլմիշ օլան բարաճա միւշքիւլաթը
արզ իտուպ տէմիշ տիր . «Ասքէր-
լէրիմիզի ալալթմազ միւմքին տի-
կիտիր . Պինապէրին թէքիթի ի-
տէրիմ քի . ինկիլիզ ասքէրի 3 սէ-
նէ սանճազ ալթընտա խըզմէթ
իթտիլթէն մաւտա . 9 սէնէ տա-
խի ըէտիթ օրտուսընտա իսթէխ-
տամ օլընմալը տըր» : Քէզա աս-
քէրլէրին մաաշընըն արթըրըլա .
ճաղըն պէյան իթմիշ . վէ նիհա-
յէթ ինկիլիզ ասքէրլէրինին նի-
զամազ վէ ինսանիյէթսիլ հարէ-
քեաթլարընտան տօլայը եազըլան .
լարըն ասլու էսասը օլմաթըլընը
իտաա իթմիշ տիր :

— Թրանսվալտան ինկիլիզլէ-
րէ մազարալթըլ խապէլլէր եէ-
թիշմիշ օլմասը սէպէպի իլէ Լօն-
տրա պօրասընտա ճէնուպի Աֆ-
րիգա թահալիլթըն ֆիյաթը տիւշ
միւշ տիր :

— Թրանսվալա մուհարէպէսի-
նին պիր սէպէպի ատտ օլընտն
միլիոնիսթ Սէսիլ Բօտըս էօլիւմ
տէրէճէսինտէ խապթա տըր :

Մ. ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայը զիյարէթ իթմէքտէ
օլան Ալմանիա իմէրաթօրըն պի-
րատէլի բրէնս Հանրիհ քէնտիսինէ
իզրամէն քէշիտէ օլընան պիր զի-
յաֆէթտէ տէմիշ տիր :

«Վուրուշմայա հազըր ֆազաթ
մուհարէպէ սէվմէյէն պիր միլլէթէ
մէնսուպըմ . հիւքիւմտարըմ մու-
սալէհէնին մուհաֆազասընա ար-
զուքէշտիր : Մ. Ամերիկա իպրազ
իթտիկի տօթլըղըն մուգապէլէ-
սինէ լայըզ տըր» :

— Մ. Ամերիկա մաթպուլաթը
նամընա իմէրաթօր վիլհէլմէ շու-
թէլէկրաֆ վէրլիմիշ տիր . «Մ. Ա-
մերիկա կազէթաճըրարը . 1000
մուհարրիբ . պիրատէրի ալինիզէ
իզրամէն քէշիտէ օլընան պիր
զիյաֆէթտէ . սիլի ճան ու տիլտէն
սէլամալուպ . էօմրիիզին ուզու-
միւտտէթ տէվամընը վէ հիւքիւմ-
տարըղընըլըն թէրազըրընը թէ-
մէննի իտէրլէր . Բէլէնս Հանրիհին
պու միւլթտէ հազըր պուլընմասընը
տօթլըղընըլըն տահա գալիլէշ-
մէսինէ պիր տէլիլ ատտ իտէրէք .
քէնտիսինի թէպիլթ իտէրիլ . վէ
պիզէ թէնսիպ պուլըրտըղընըլ
տօթլմանէ նիւմայէշիլիլ մուգա-
պէլէ էլլէրիլ» :

ՊՕԵՐԼԷՐ

Ճէնուպի Ռֆրիգատան ալընան
սոն հաֆատիւլէր ինկիլիզլէրի եէ-
նիտէն գահրա իլգա իթմիշէր
տիր . էվվէլթի նիւսալմիզտէ եազ-
մըջ օլտըղընըլ իլըն՝ Պօէրլէր ի-
նէկլէրին իլէլլէրի սրգասընա սի-
բէրլէնէրէք . խալը ինկիլիզ աս-

քէրլէրի թէլէթ իտուպ . գաշլըշ-
լարըտը . Ֆադաթ Բէրբատորբտա
վազու պուլան սոն գալկաւտա 700
քիլիտէն իպարէթ պիր ինկիլիզ
թապուրը ամմէթէն եէսիր թու-
թուլուպ . 7 զապիթ վէ 50 առ-
քէր էօլիւ վէ հարէլի տիւշմիւշ-
լէր . քէզա Պօէրլէր իքի թօր
զապթ իթմիշլէր :

— Պրիւքէլտէքի Թրանսվալա
սէֆարէթինին պէյաննամէսինէ պի-
նալն . պու կիւն մէյտանը մուհա-
րէպէտէ Պօէրլէրին 23,000 ճէնկ-
ճիսի վար տըր . պուլարըն 8000ի
Թրանսվալը . 4,000 Որանթըլ վէ
11,000ի Աֆրիգանտէր . եախօտ
Գար վէ Նաթալ ասըլարը . Պուլն-
յարտտ սիլահ վէ մուհիմաթ մէվ-
ճուտ րմըջ :

— Սուլս իշիւն Մ. Ամերիկա-
նին թէվաւսուլթըն թէքիթի իթ-
մլք իշիւն կիթմիշ օլան պօէր մու-
րախալարըն ճիւմհարիլէթ ըլիսի
Մ. Բուզմէլթ զալըր ըէսմի սու-
րէթտէ գապուլ իտուպ «Ճէնուպի
Աֆրիգա մուհարէպէսինէ թէվա-
սուլթ իթմէք նէ՝ իսթէրիլ վէ նէ տէ
իտէրիլ» տէմիշ տիր :

ՐՈՒՍԻԱ

Ջերզէլէտէն սէֆալթէթ տիւշար
օլան Շամախ իհալիսինէ իանէթէն
Չար 150,000 լուպի իհտա իթ-
միշ տիր :

— Րուս կազէթալարտան պիր
թազըմը ինկիլիզ-ճարօն իթթի-
ֆազընտան պահալէ «անըն պիզէ
հիշ պիր քէտէրի օլամազ . Պիւս
Մանչուրիայը լուս օրտուսը օ իթ-
թիֆադտան տահա Լվվէլ իսթիւա
իթմիշ տիր» տէյօրլար :

Էլլէվմ Բուսինըն Մանչուրիա-
տա 60,000 ասքէրի վար տըր :

ՍԵՐՊԻԱ

Սերպ գրալընա վէ գրալիցասը-
նա խուսուլթի օլուպտէ . Գարա-
կէօրկէվիշ խանէտանը լէհիլէ ճէ-
միլթի ֆէսատիյէ թէրթիպ իթ-
մէքտէ օլան սըրպարըն Աւստրիա-
Մաճարիստան թօրաղընտան գօ-
վուլաճաղարը վիլէննատան պիլ-
տիրիլիօր :

ԻՐԱՆԻՆԻՔ ՊԱՏՈՍԹԱՆՆԵՐԸ

Տ. Կ. Մարտիան . — Ստացած ենք
ձեր զրկած 4.60 տոլարը :

— Տ. Թ. Արազ . Նաւաւա . — Ղըր-
կեցէք որ տեսնենք . եթէ չահեկան
ըլլան . լաւ . Լիւթուրընէ բաժանորդ
կը նշակենք ձեզ :

ԿՕՇԿԱԿԱՐ



Ճաշակաւոր և տոկուն
կօշիկ հագնելու համար
գիմիկ Ստեփան Խօրա-
սանճեանի խանութը .
փողոց Մուսալա . Գի-
նիւր խիստ չափաւոր են :